ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի սեպտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 39935.4 մլն դրամ՝ պլանավորված 36900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8.2 տոկոսով կամ 3035.4 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 52.3 տոկոսով կամ 13719.0 մլն դրամով, որից 10314.0 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Սեպտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3916.5 մլն դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 6.5 տոկոսով կամ 238.9 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 94 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 1 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 27 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 95.8 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 18 ստուգում՝ 94.8 մլն դրամ գումարով:

ԱՀ կառավարության 30.07.2018թ. N620 որոշմամբ հաստատված «Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման և հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման 3-ական, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 2 և պակասորդի հայտնաբերման 1 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 98 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 67-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 19-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես

նաև իրացման փաստացի գների չափագրման, 4-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության և 8 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 1 վարչական գործ՝ 4.5 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 6 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 10.7 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 117 վարչական գործով սահմանվել է շուրջ 1.9 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետությանը հասցված 150.0 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5904 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5301:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 51 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 12 վարձու աշխատողի՝ 1.3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 39 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Նախարարության մեկ աշխատակից մասնակցել է «Ֆինանսների առաջատար փորձի կենտրոն» միջազգային կազմակերպության կողմից Սլովենիայի Լյուբլյանա քաղաքում կազմակերպված «Հարկային մարմինների համար դասավանդողների վերապատրաստում» թեմայով սեմինարին:

Հաշվետու ամսում ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2018 թվականի 3-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 743 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները, կայքի միջոցով կազմակերպվել հարկային օրենսդրության և հարկային մարմնի աշխատանքների վերաբերյալ ինտերակտիվ հարցում:

«Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակներում նախատեսված միջոցառումները համակարգված իրականացնելու նպատակով հաշվետու ամսում ԱՀ ֆինանսների նախարարի տեղակալի գլխավորությամբ կազմակերպվել է ժողով՝ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների մասնակցությամբ, որի ընթացքում հստակեցվել են ստորաբաժանումների կողմից իրականացվելիք միջոցառումների շրջանակները, տրվել կոնկրետ հանձնարարականներ:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 240, ելքագրվել՝ 85 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 8 գրություն, որից 5-ը՝ էլեկտրոնային և «Skype» հեռաձայնային ծառայության միջոցով:

ՀՎՄՀՎԻԲ պետ **Ա. Մուսայելյան**